

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին իւր Պայտը 40 Մէճ.
Գաւառաց 2 լիւր
Վեցամս. և Պայտը 3 Մէճ.
Գաւառաց 1 լիւր
Օտար երկիրներու 30 Ֆր.
Գանձուցման տուրք մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուշ է. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարսարծ :




ԼՐԱԳԵՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գործը գնացած լրագրաց ճանրու-
ծ ախրը խմբագրութեան վրայ է :
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խմբագր-
—ճանրելին պիտի ուղղուի : Ղալա-
թիա Սանտրոքըրար Հաստիսի թիւ
198, Նորո խան, Մառիտի գրասեն-
եակը :
Հանրու ծախքը չմտաւորաւ նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակը յոյժում, ետ
եւ չեն տրուիր :



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 4 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Օպորուչեֆ զորավարին քանի մը
խօսքերն Անգղիացւոյ ոմանց շիշե-
րուն դպած կերեխն : Լորտերուն և
երեսփոխանաց ժողովներուն մէջ հար-
ցումներ եղան ասոր համար : Ռուս
զորավարն ըսած էր Արեւելեան Ռու-
սիայի Պաշտպանութիւնը Բ. Գուստը չա-
նապարհը Պայքանները դրուելու, և
սահմանադրութիւնները զորք գնելու ի-
րաւունքը վերադարձնելու, առ այժմ
ստիպողական հարկ չտեսնել այս ի-
րաւունքն ի գործ դնելու : Նախա-
րարաց հարցումը ընող անգղիացիք
գիտնալ կուզէին թէ որքա՞նք Օպ-
ուչեֆ զորավարն ըսել կուզէ թէ
վեհ. Սուլթանը Պայքանները զորք
գնելու իրաւունքէն կը հրաժարուի :
Լորտ Սալիսպրի և Պ. Պլեյքը պա-
տասխանեցին թէ վեհ. Սուլթանն իւր
այն իրաւունքը թողած է, և թէ
Օպուչեֆ զորավարն խօսքէն այն-
պիսի հետեւութիւն մը չկրնար հան-
ւել : Իսկ Պ. Պլեյքը ըսած թէ Բ. Գու-
ստը Պայքանները զորք գնելու իրա-
ւունքէն հրաժարելու համար Ռու-
սիոյ հետ համաձայնութիւն մը կըն-
քելու զրոյցին վրայ տեղեկութիւն
չունի : Անգղիացւոյ այս կասկածնե-
րն Օպուչեֆ զորավարին Ռուսաց
կայսեր կողմէն առ վեհ. Սուլթանն
նամակ մը բերելուն և երկուքի կայ-
սերական պալատին մէջ մասնաւոր
տեսակցութիւն մը ընելէն ծագած են :
Ռի թէրն մէկ հետագիւրը միջադա-
շտքէն Լոնտոնի լրագրաց կը ծա-
նուցանէր թէ Չարին նամակն երկու
վեհապետաց միջև բարեկամութիւն
և լուս դրացութիւն կառաջարկէ, թէ
Օպուչեֆ զորավարն երկու կողմանց
մէջ բարեկամութիւն հաստատել ա-
ռաջարկեր է բերանացի, և առանց
Եւրոպական տէրութեանց միջամը-
տութեան թուրքիոյ ուղղապէս Ռու-
սիոյ հետ համաձայնելուն օգտակա-
րութեանը վրայ պնդեր է : Այս թէ-
ֆանտոսի գաշնադրութեանէն ետեւ կըս-
ւէր թէ Ռուսիա Բ. Գրան հետ դաշ-
նակցութիւն մը հաստատել կառա-
ջարկէր : Այս զրոյցը մեծ տպաւո-
րութիւն ըրած էր Եւրոպական այն
տէրութեանց վրայ՝ որք մասնաւոր
չափ մ'ունին Որեւելեան խնդրոյն մէջ
ուստի առաջարկեալ գաշնակցութիւ-
նը արգիւրելու համար այն ժամանակ
չատ չանք եղաւ, և յաջողեցաւ :
Բայց Եւրոպական լրագրիքը գարձեալ
այս օրերն կը կարծեն թէ երկու
նախկին թշնամեաց միջև համաձայ-
նութիւն գոյացած է, և ասոր միջ-
նորդ կը ցուցնէին Պարսից դեսպան
Իօհանն խանն :

Այսու ամենայնիւ, եթէ պէտք

է հաւատ ընծայել Նոս լրագրին, որ
Ռուսական բերան մ'է, Ռուսիայի վե-
րոյնեալ հետագրին տուած լուրը
պարզապէս մտացածին է եղեր, և
միակ նպատակը տէրութեանց աշխար-
հաւարութեան մէջ նոր կասկածներ
յարուցանել է եղեր այնպիսի վայրկի-
եան մ'ուր ամեն կողմերէ միաքերն
հանդարտիլ կ'սկսէին : Նոս կըսէ
թէ, ըստ իւր տեղեկութեանց, Օպ-
ուչեֆ զորավարն պաշտօնը Պէրլի-
նի գաշնակցութեան անկեղծ գործադրու-
թիւնն ապահովել է, և ոչ թէ որ և
է մէկու մը (Անգղիոյ ըսել կուզէ)
չահերուն ֆանտասիա կարգադրու-
թեան մը ճանապարհ բանալ :

Անգղիոյ գիւրադարձութիւնը
գիւրաւ կրնայ հասկցուիլ : Ռուսիոյ
և թուրքիոյ միջև առանց Եւրոպա-
կան միջամտութեան ուղղակի համա-
ձայնութիւն կամ գաշնակցութիւն մը
Եւրոպական արդեցութեան վախճա-
նըն ըսել է Արեւելոյ մէջ. հետեւա-
բար Անգղիոյ ոչ միայն քաղաքական
այլ և առեւտրական շահուց մեծ հար-
ւած : Այս պատճառաւ Անգղիացիք
ամենափոքր նշանէ մը կը յուշուին :
Մինչև ցարդ Ռուսիոյ հետ ուղղակի
համաձայնութիւն մ'անկարելի եղաւ,
և այսուհետեւ ալ նոյնը պիտի լինի,
քանի որ երկու կողման մէջ անհուն
անջրպետ մը կայ զոր անհնար է ար-
տաքին ցոյցերով ծածկել : Ստորոգ
է որ Պարսկաստան Ռուսաց բանակնե-
րէն յաղթուելով քանի մը դաւառ-
ներ տալէ ետեւ՝ Բեքսապուրիկ ար-
քունեաց հետ բարեկամ եղեր և առ-
կէ օգուտ քաղեր է, ինչպէս ըսած
է եղեր Մոհամմէ խան առ վեհ. Սուլ-
թանն. սակայն Պարսկաստանի և թուր-
քիոյ դրեց մէջ մեծ տարբերութիւն
կայ, և վեհ. Սուլթանը չկրնար ճա-
հին ընթացքին հետեւիլ : Գալով այն
զրոյցին թէ Օտէմայի Ռուս պեղա-
նաւորաց կողմէ Բ. Գրան փոխառու-
թեան մը չնորհի Օսմանեան զորաց
Պայքանները գրաւելու իրաւունքը
թողուած է, պարզապէս եղջերուա-
քաղ մը պէտք է համարել :

Անգլիականն ի լրոյ ծանուցած
էինք թէ Անգղիոյ կառավարութիւնն
Անատոլիոյ մէջ շատ տեղեր հիւսա-
տութիւններ և փոխ հիւսապատու-
թիւններ հաստատելու մտադիր է :
Այս լուրն Անգղիոյ նախարարաց պաշ-
տոնական յայտարարութեամբն հա-
տատուեցաւ : Անգղիոյ երեսփոխա-
նաց ժողովին մայիս 3 ի նստին մէջ
Պ. Հոլմս այս նկատմամբ հարցում մը
ներով՝ արտաքին գործոց նախարա-
րութեան օգնական Պ. Պլեյքը պատաս-
խանց թէ Անատոլիոյ մէջ հիւսա-
տութիւններ և փոխ հիւսապատու-
թիւններ հաստատել որոշուած է,
բայց տակաւին այս որոշումն ամբող-
ջապէս չէ գործադրուած : Երբ այդ

հիւսապատութիւնը և փոխ հիւսա-
տութիւնը հաստատին, Անգղիոյ
կառավարութիւնը նոր հիւսապատու-
թիւն հիւսապատուաց անուններն և
անոնց բնակելիք քաղաքները պիտի
ծանուցանէ խորհրդարանին :

Գաղղիական Տէպա լրագրին Կ.
Պոլսոյ թղթակիցն Արարատեան ըն-
կերթութեան կողմէն առ թիւ հե-
տեալ նշանաւոր և մեր աղբայնոց
ուղղութեան արժանի ասորքը
ըրած է յիշեալ լրագրին :

“Մինչդեռ մէկ կողմանէ այլք քիչ
խաղաղական կերպիւ կը յուղին, խեղճ
Հայք ալ իրենց ընտրած եղանակաւ
կը յուղին, որ ուրիշ եղանակներէ
լուսադոյն է : Հայոց Արարատեան ըն-
կերթութիւնն, որոյ վրայ արդէն խօ-
սած եմ ձեզ, և որ օր ըստ օրէ կը
բարգաւաճի, երէկ յատուկ կոչուն-
քով մ'իւր չորրորդ տարեդարձը կը
ստնէր : Այս ընկերութեան գլխաւոր
նպատակն է Հայ հասարակութեան
մէջ կրթութիւն ծաւալել և ապէս աշ-
խարհական ուսուցչութեան մը : Հայք
ուրիշ կերպ ուսուցչութիւն չեն ճան-
չեր, և թերեւ իրաւունք ունին :

Գրանի մ'Եւրոպական լրագրաց
թղթակիցը այս բնութեական տօնին
հրաւիրեալ էին, և բերկրութիւն մ'էր
տեսնել թէ ինչ սիրայիւր ընդունե-
լութիւն մ'եղաւ անոնց : Արդարեւ,
Հայք, այնպիսի հանգամանքներ ու-
նին որ նշանակութեան խիստ արժա-
նի են : Աղբային ամենալեւի գլա-
ցում մը, զոր ոչինչ կրնայ պաղեցը-
նել, զայն ծաւալելու և զորացնելու
ճանախտ միջոցին գլխակցութիւնն,
այն է կրթութեան ծաւալումն, առ
որ եռանդուն բաղձանք մ'ունին,
սրտագրաւ բնութեականութիւն մ'ը
մանաւանդ համեստութիւն մը, որուն
ուրիշ ժողովուրդք լաւ կընեն նմանիլ :

Պէրլինի գաշնակցութիւնն ար-
դարեւ քիչ մ'ղբալեցաւ այս խիստ
համակրելի ազգին, բայց վերջապէս
բողոքովն պատանական հոգածու-
թիւն մը միայն նուիրեց անոր : Իսկ
Հայն, որ անկէց աւելին կը յուսար,
այս ամենապաշտօնաւոր եռանդեան մէջ
վհատութեան պատճառ մը չգտաւ :
Ճշմարիտ է որ ամեն ժամանակ ու-
րիշ շատ խոչընդոտներ կրած է Մի-
թէ Հայաստան ամեն տեսակ յար-
ձակմանց և բռնութեանց նախամե-
ծար ասպարէզ մ'եղած չէ, և յայտ-
նի է թէ այժմ իսկ ինչեւր կը կրէ
Գիւրտերուն վայրագ ասպատակու-
թիւններէն : Բայց Հայք վստահու-
թիւն ունին իրենց բաղձանաց օրի-
նաւորութեան և ասպարային վրայ
ուստի սպասելու զօրութիւն կը դրո-
նեն, քաղ զխանութիւն որ եթէ արդի
սերունդն արեւդական առջև իւր ճըշ-
մարիտ աւելը չպիտի բռնէ, յաջորդ

սերունդն իւր նախորդներուն սեր-
մանածը պիտի հնձէ անպատճառ :
Հայոց ազգը՝ Միհրդատներու և Տիգ-
րաններու թագաւորութեան վերա-
հաստատութիւնը չեղադրեալ, այլ մի-
այն ապահովութիւն վայելել կը բաղ-
ձայ : Առ այժմ, արատութեան ար-
ժանանալու և զայն ձեռք բերելու
համար ամենէն աւելի հարկաւոր ե-
ղող բանը կրնէ. կրթութիւն կը տա-
րածէ ամեն կողմ՝ այնպիսի եռանդ-
եամբ մը, որ խորին հաւատքէ մը յա-
ռաջ կուգայ :

Հաստեան կաթոլիկ Հայերն ի-
րենց յաղթանակին համար ուրա-
խութեան մէջ են : Մօսկուս Աղարեան
գերապայծառն ամենապաշտօնաւոր
գաղգոյն սեղուտէ քսակի մը մէջ 7—8
մէթրօ երկայնութեամբ և հազարէն
աւելի ստորագրութիւն կրող գրու-
թիւն մը կը տանէր Բ. Գուստն : Ասի-
կա “Հնորհակալութեան խոնոր” Ու-
ղերք մ'էր առ առատագութեւ և ար-
դարաւոր Սուլթանն՝ կայսերական
Պէրլիթը վերստին Գեր. Հաստեանին
շնորհած լինելուն համար : Ուղերքն
“այս նշանաւոր իրողութեան մէջ այն
մարդարիտներէն մին տեսնել կը յայ-
տարարէ, որք Ն. Կ. վեհապետու-
թեան գաշնակցութեան ի վեր շա-
րակցելով վստաց թագ մը կը կաղ-
մեն իւր հոյակապ գահուն բոլորալի-
քը : ”

Այս “մարդարիտն” արդէն իւր
արդիւնքն յառաջ բերաւ : Տրապի-
զոնի և Էնկիւրիի Հակահաստեանեան
ներէն քանի մը հարիւր հոգի հը-
նադանդեցան Գեր. Հաստեանին : Ի-
րաւ է սակայն որ զայս ըսողներն Հա-
ստեանեանք են :

ՀՆՈՍԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտոն 15 մայիս

Թայմ լրագրիւր Վիեննայի թղթակիցն
առնով հետեւեալ հետազոտը կը հրատա-
րակէ իւր այս առաւօտեան թուով :

«Նոյի Պալատին, Պոսնիոյ և Հէրսէ-
քի վերաբերեալ գաշնակցութեան հրա-
տարակութիւնը Վիեննայի մէջ հաստա-
տութեան մեծ զարմանք և զժգոհութիւն
պատճառեց իւր այն արամադրութեամբն
որ Պոսնիոյ և Հէրսէքի վրայ Սուլթանին
վեհապետութիւնը կը հաստատէ : Միւս
կողմանէ՝ Հունգարացիք դո՛ւն զաշնակ-
ցութեանէն, որովհետեւ յիշեալ դաւառաց
Աւստրո—Հունգարիոյ հետ միացման ա-
ռաջը կ'աւանդէ :

Այս առաւօտեան հետազոտը

Լոնտոն 15 մայիս

Երեսփոխանաց ժողովին մէջ երկու-
սից նախարար Սըր Սթաֆօրթ Նորթքոթ-
հարցման մը պատասխանելով ըսաւ թէ
Անգղիոյ կառավարութիւնն յաճախ յոր-
դորած է Բ. Գուստն որ Պէրլինի գաշ-
նակցութեան 25րդ յօդաւորը գործադ-
րէ, (որ Եւրոպական գումարաց համար

ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԿՈՐԻՓԻՆ



4) 30 Պէ. յըօդ. Բաշապ. Գ. աշխ. Լ. Հիւսուր, Գ. աշխ. Վ. աշխ/ը. 12
 25 նի. Պէ. յ. Գ. աւ. զի. (Լիժաշ. դշոյ) :

41 15 Պէ. յըօդ. Բաշապ. Բ. փաշաւ մահ. Գ. աշխ/ըճաւ. Լ. Հիւսուր, Գ. աշխ/ը. Լիւր, Վ. աշխ/ը. յ. 25 նի. յի. Պէ. յ. Գ. աւ. զի. (Ուրբաթ օրը. յը. ժամ 11 1/2 լի) :

41 30 Արշաթ. Վ. աշխ/ը. յ. 25 նի. յի. Պէ. յի. յ. Գ. աւ. զի. Գ. աւ. յ. 2



UNITED SERVICE
SOAP TABLET

Մենուհաշոտ օճառ, մորթը կը կակուղցնէ ու լեզի ջուրով ալ կը
վրիթրի, տեսակը իրիտ աղնիւ ու գինը չաա աժան է կը
ձախուի Կ. Պօլիս Դաւաթիա Մինասեան և Ընկիբայ Ամերիկա,
ի մաղաղան: